

աւլարիչ գրկեց, այս առթիւ հրահանգելով որ խաղաղական միջոցներով շահի Սիւնեաց եւ Աղուանից հայ իշխանները, այդպէսով Բարակը իր ձեռքէն փախչելու կարեկիւթիւնը նուազեցնելով: Այդ առթիւ հաւանարար Սահլի ներուեցաւ իր ըմբոստութիւնը եւ ճանչցուեցաւ իր իշխանութիւնը: Ալ-Աֆշինի այդ ընթացքը արդարեւ պտղաւից եղաւ եւ Բարակ Սահլէ ձերբակալեալ յանձնուեցաւ ալ-Աֆշինի:



Այս աշխատութեան սկիզբը տեսանք թէ ինչպէս Բարակ ձերբակալուեցաւ Սահլէ, երբ, ան, Բարակ, իբր թէ Բիւզանդիոն փախչելու համար Սահլի երկրին սահմաններէն կ'անցնէր:

Կարելի չէ շտրտի որ ալ-Աֆշին արդէն պայմանաւորուած էր Սահլի հետ, Բարակը անոր մօտ ապաստանելուն՝ բռնելու եւ իրեն յանձնելու: Ատոր համար ալ-Աֆշին գուցէ խալիֆայութեան համար ներեց Սահլի նախկին ըմբոստութիւնը եւ ճանչցաւ անոր իշխանութիւնը:

Սահլ երբ կը ջանայ համոզել Բարակը որ ընդունի իր հիւրասիրութիւնը, մենք հոն չենք հանգիպիր որեւէ ակնարկութեան Սահլի Բարակէ կախնաւորուած ըլլալուն, որուն կը վկայէ Մակեդիսի: Ոչ մէկ խօսք Բարակի կողմէ Սահլի մօր, կրնոջ եւ քրոջ բռնարարուելուն: Արդարեւ դարձանալի է որ Տարարի իր տուած չափազանց մանրամասնութեանց մէջ չի յիշեր նման պատահար, եթէ իրապէս տեղի ունեցած ըլլար:

Ըստ իս՝ Սահլ Բարակը դաւով ձերբակալեց, որովհետեւ Սահլ Բարակեան մը չէր, ինչպէս էր ազգական Աբլասադ Ստեփանեանը: Սահլ տեսաւ որ Բարակ այլեւս սպառնալիք մը չէր: Յետոյ Արարները ներած էին իր ըմբոստութեան, ճանչցած իր իշխանութիւնը. եւ Բարակը անոնց յանձնելով նախ չարք բարձած կ'ըլլար Սիւնեաց եւ Աղուանից վրայէն, վրէժ առած կ'ըլլար Մեծիրանաց եւ Շաբեոյ

(Շիկաքարի) վրայ Բարակեանց ասպատակութեանց, վրէժ առած կ'ըլլար նաեւ Բարակի կատարած նախճիրներուն Բաղասականի եւ Գեղարքունիքի մէջ:

Եագուպի կը գրէ 222 թուին դիմաց (837). «Օշին գրեց Հայոց եւ Ատրպատականի իշխաններին՝ որոնել Բարիկին, խոստանալով 1,000,000 դրամ նորան, ու նորան (Բարակը իւր մօտ) բերէ: Բարեկ գնաց իշխանները մէկի մօտ, որ Սահլի Սմբատ կը կոչուէր. վերջինս ձերբակալեց նորան եւ տեղեկացրեց Օշինին այս բանի մասին»⁽¹⁵⁾: Մասուտի ալ կը վկայէ որ «Բարանը բռնելու համար, Սահլ ստացաւ պատուոյ պատմուճան, թագ մը եւ ձի մը, եւ ստացած է դրամական պարգև: Անոր դարձուցած է հարկը եւ ստացած է մէկ միլիոն տրախմի»⁽¹⁶⁾:



Ետանշահիկ տոհմը ինքն իր մէջ ալ դաւեր, սպանութիւններ ունեցած է: Կաղանկատուացի կը պատմէ որ Միրեան-Ետանշահիկ (Հայկազինս) խառնուրդ տոհմէն սերած Վարազ Պերոժ ունեցաւ յաջորդներ՝ որոնցմէ էր Վարազ Տրդատ, Վարդան, Ներսէս: Ներսէս, 853ին Բուղայէն Սամարա արքորուած Հայ իշխաններուն մէջ էր, սակայն երբ «անցանէր զՀացիւն գիւղ մտանել յԱտրիս եւ լինէր օրն կլուրակէ: Նա մեկեանեալ յրնկերացն միայն դարձաւ» (էջ 387): Ներսէս, որ անշուշտ նոյնն է Արծրունի ցանկին Ներսէս իշխան Գարտքայամիցիի հետ (էջ 310), վանք մը կ'ապաստանի եւ երկար առեւն կը մնայ անանուն: Ներսէսի որդի կը յիշուի Գագիկ, եւ Գագիկայ որդի Ստեփաննոս եւ Ապրամեն քոյրը: Ասկէ տարբեր է Ներսէսի Փիլիպեան որ կը յիշուի Կաղանկատուացիէ եւ իր շարունակողէն երկու ան-

(15) Արարացի մատենագիրներ Հայաստանի մասին, էջ 119:

(16) Պատմական Հայաստանի սահմանները, էջ 172: